ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց մասին կոնվեցիայի դրույթներով և ՀՀ օրենքներով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի և ՀԿ-ների միջոցով 2016 թվականի ընթացքում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում կայացել է երեք նիստ, որի օրակարգում եղել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների համապատասխան քննարկումներ: Իրականացվել են մարզի հաշմանդամների իրավունքների պաշտպանության, հասարակության մեջ նրանց ինտեգրման և այլ բնույթի ուղղվածություն ունեցող միջոցառումներ:

1. Հաշմանդամների շահերի պաշտպանության, կարողությունների զարգացման թեմաներով կազմակերպվել է տարաբնույթ սեմինարներ: Հանրային քննարկումներ է իրականացվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և այլ թեմաներով մարզում գործող 3 հեռուստաընկերություններով /Քյավառ, Զանգակ, Սևան/:

Հաշմանդամների իրավունքների ոտնահարման դեպքերը բացահայտելու նպատակով ստեղծվել է թեժ գիծ:

2. 2016թ ապրիլ-մայիս ամիսներին մարզպետարանի և Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի հետ համատեղ իրականացվել են երեք հանդիպումներ <<Խրախուսական կարգապահություն>> թեմայով սեմինար-միջոցառումներ համապատասխանաբար ծնողների, մանկավարժների և երեխաների հետ՝ հիմնական շեշտը դնելով բռնության կանխարգելմանը:

2016թ ամառային արձակուրդների ժամանակահատվածում Վարդենիս քաղաքում գործող <<Աստղավարդ>> հասարակական կազմակերպության և մարզպետարանի հետ համատեղ, իրականացվել է ներառական ցերեկային ճամբար Վարդենիս քաղաքի և հարակից գյուղերի հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքների թվով 80 երեխաների համար, 15-օրյա ժամկետով:

3. Համագործակցելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ մարզի հաշմանդամ քաղաքացիներին ապահովել ենք հաշմանդամության պարագաներով՝ պրոթեզներ,օրթեզներ,հաշմանդամության սայլակներ, ձեռնափայտեր, լսողական ապարատներ և այլն: Մարզի զբաղվածության տարածքային գործակալությունները 1 հաշմանդամ գործազուրկի ընդգրկել են մասնագիտական վերապատրաստման դասընթացի, աշխատանքի են տեղավորվել 12 հաշմանդամներ:

4. Մարզի 17150 հաշմանդամներից՝ շուրջ 390 հաշմանդամություն ունեցող անձանց ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից տրամադրվել է ֆինանսական աջակցություն, իսկ վերականգնողական և առողջարանային բուժման ուղեգիր է հատկացվել 119 հաշմանդամի, հատկացվել են առողջարանի և հանգստյան տան ուղեգրեր: Մարզի հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով

ընտանիքների 307 երեխաներ մեկնել են ,,Հանքավանի,, ամառային հանգստյան ճամբար, որոնցից 42-ը հաշմանդամություն ունեցող ընտանիքների երեխաներ:

2016 թվականի ընթացքում մշտապես իրականացվել են աշխատանքներ մարզի հաշմանդամություն ունեցող ազգաբնակչության սպասարկման ուղղությամբ: Հատկապես ուշադրության կենտրոնում են Հայրենական և արցախյան պատերազմի մասնակիցները և վետերանները: Յուրաքանչյուր ամիս բուժամբուլատորիաների կողմից մարզպետարան է ներկայացվում նրանց առողջական վիճակի սպասարկմանը վերաբերող տեղեկատվություն: Արցախյան և ընդհանուր հաշմանդամություն ունեցող անձանց տրվել են առողջարանային ուղեգրեր:

Ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող 30 երեխաներ ուղղորդվել են Երևան և Գավառ քաղաքներում գործող բուժ. վերականգնողական կենտրոն:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում վերանորոգվել է 15 շենք, որոնք միայն թեքահարթակներով են հարմարեցվել՝ հաշմանդամների համար: Հնարավորության սահմաններում համագործակցել ենք մարզում հասարակական նշանակության շենքերի շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների հետ, նոր կառուցվող կամ վերանորոգվող շենքերը թեքահարթակներով ապահովելու՝ հաշմանդամներին հարմարեցնելու նպատակով:

Մարզի 3 քաղաքային համայնքներում՝ Գավառ, Սևան և Ճամբարակ գործում են բարեգործական ճաշարաններ, որտեղ հաճախում են ինչպես անապահով, այնպես էլ հաշմանդամություն ունեցող 202 անձինք, ովքեր չունեն շարժվելու խնդիր, իսկ շարժվելու խնդիր ունեցող հաշմանդամներին կատարվում է սննդի առաքում: Ճաշարանների գործունեությունը իրականացվում է համայնքային բյուջեի և “Առաքելություն Հայաստան “ ՀԿ-ի կողմից:

5. Մարզպետարանի միջնորդությամբ ՀՀ ՊՆ-նը մարզի 1 հաշմանդամ և 2 զոհվածի ընտանիքի ֆինանսական աջակցություն է տրամադրվել բնակարան ձեռք բերելու նպատակով:

6. Մարզի 125 հանրակրթական դպրոցներից 6-ում իրականացվում է ներառական կրթություն՝ Գավառի N 1 հիմնական, Ճամբարակի N 1 հիմնական, Վարդենիսի N 2 հիմնական, Սևանի N3 հիմնական, Մարտունի քաղաքի N 2 հիմնական և Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն, որտեղ սովորում են 115 երեխաներ: Գավառում գործում է նաև մեկ հատուկ դպրոց՝ 40 աշակերտով: Ներառական կրթությանը զուգահեռ, երեխաների բարոյահոգեբանական վիճակը ավելի ամրացնելու նպատակով կազմակերպվել և անցկացվել են ֆիզկուլտուրային առողջարարական մարզական մի շարք միջոցառումներ, որոնց մասնակից են դարձել հաշմանդամություն ունեցող անձինք, մասնավորապես՝ կազմակերպվել են սպորտլանդիայի, շախմատի, վազքի, թենիսի գնդակի նետումների մրցումներ տարբեր տարիքի երեխաների համար:

Նշված բոլոր դպրոցներում լուծված է երեխաների սննդի և տրանսպորտային խնդիրները, առկա են հարմարեցված սանհանգույցներ, թեքահարթակներ:

Դպրոցների գործունեությունը ապահովվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Հաշմանդամ մանուկների և պատանիների ֆիզիկական հնարավորությունները վերականգնելու նպատակով, բացի սպորտային պարապմունքներ կազմակերպելուց, մարզի ուսումնական հաստատությունները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավասու մարմինները իրականացնում են նաև մեթոդաբանական ու բժշկական աջակցություն: Կազմակերպվում են մարզական միջոցառումներ և վերականգնողական նպատակով նախատեսված

խաղեր և վարժանքներ: Տարին երկու անգամ մարզի ուսումնական հաստատություններում, մարզադպրոցներում անցկացվում են բուժական կանխարգելիչ հետազոտություններ, այդ թվում մարզադպրոցներում ընդգրկված 21 հաշմանդամություն ունեցողների համար:

Նշված բոլոր դպրոցներում լուծված է երեխաների սննդի և տրանսպորտային խնդիրները, առկա են հարմարեցված սանհանգույցներ, թեքահարթակներ:

Դպրոցների գործունեությունը ապահովվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

2016 թվականի սեպտեմբերին Ծաղկաձորում անցկացվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթի եզրափակիչ փուլի մրցումներ: ՀՀ Գեղարքունիքի մարզի 20 մարզիկներ մասնակցեցին առաջնությանը:

Միջոցառումները կազմակերպելիս մարզպետարանը համագործակցել է Գավառի վերականգնողական կենտրոնի, դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիայի, <<Գեղարեգ>> կրթամշակութային, <<Վորլդ վիժըն>>, <<Կարիտաս>>, <<Աստղացոլք>>, <<Աստղավարդ>>, <<Մանկուց հաշմանդամ երեխաների մայրերի խորհրդի>> և այլ հասարակական կազմակերպությունների հետ:

7. Մարզային հանձնաժողովը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, միջազգային բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարերարների հետ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող մարզային և հանրապետական ՀԿ-ների հետ, որոնք մարզում իրականացնում են ծրագրեր:

- Գավառում գործում է “Արաբկիր” բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի Գավառի ,,Երեխայի զարգացման և վերականգնման կենտրոն,, ՀԿ-ն , որը սպասարկում է մարզի խնդիրներ ունեցող երեխաներին:
- Գավառի “Բարի Հույս” սոցիալապես հաշմանդամ երեխաների առողջությանն աջակցող ՀԿ-ն ուսումնասիրում և հայտնաբերում է մարզի հատուկ կարիքներով երեխաներին՝ 0-18 տարեկան և ուղղորդում համապատասխան հաստատություններ:

8. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից 2016 թվականի հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: